«Երաշխավորված է»

Տնօրենի՝ ՄԿԱ գծով տեղակալ՝ ________ Ռ. Հասասյան

«31» ____08____ 2023 թ.

«Հաստատված է»

Տնօրեն՝ ________ Գ. Ղարիբյան

«31» ____08____ 2023 թ.

«Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի

Գավառ քաղաքի Ս. Քոչարյանցի անվան N1 հիմնական դպրոց» ՊՈԱԿ

# Դասղեկի տարեկան աշխատանքային պլան

Vա դասարան

Գասպարյան Լիլիկ

2023-2024 ուստարի

***Դասարանի ղեկավարի (տարրական դպրոցում՝ դասվար) պարտականություններ՝***

*1) դաստիարակչական աշխատանք է կատարում իր դասարանի սովորողների շրջանում՝ սերտորեն համագործակցելով մյուս մանկավարժական աշխատողների հետ*

*2) նպաստում է դպրոցի և ընտանիքի մանկավարժական միասնական պահանջների ապահովմանը սովորողների նկատմամբ*

*3) անհրաժեշտության դեպքում սովորողների համար կազմակերպում է ուսումնական օգնություն*

*4) իրականացնում է դասարանի համար սահմանված գործավարությունը, դպրոցի տնօրինությանը ներկայացնում սովորողների առաջադիմության, հաճախումների և վարքի մասին տեղեկատվություն*

*5) կազմակերպում է սովորողների առողջության ամրապնդմանն ու ֆիզիկական զարգացմանը նպաստող միջոցառումներ, մրցույթներ, նպատակային էքսկուրսիաներ, շրջագայություններ եւ այլ միջոցառումներ*

*6) դպրոցի մանկավարժական խորհրդի քննարկմանն է ներկայացնում սովորողին կարգապահական տույժի ներկայացնելու հարցը*

*7) արգելում է սովորողների, ուսուցիչների և ծնողների այն նախաձեռնությունները, որոնք կարող են սովորողի առողջության, կյանքի համար վտանգ պարունակել, ինչպես նաև խաթարել ուսումնադաստիարակչական աշխատանքների իրականացումը:*

***Աշակերտների թիվը դասարանում՝***23

***Աղջիկ՝*** 11

***Տղա՝***12

***ԿԱՊԿՈՒ աշակերտ՝***3

***Դասղեկի աշխատանքի փուլային նկարագրություն***

| ***Ուսումնական տարվա սկզբին*** | ***Ամենօրյա աշխատանք*** | ***Ամենշաբաթյա աշխատանք*** | ***Ամենամսյա աշխատանքներ*** |
|---|---|---|---|
| 1. Վերանայել դասարանի սոցիալական անձնագիրը | 1. Հետևել աշակերտների հաճախումներին և բացակայություններին | 1. Անցկացնել դասղեկական ժամեր | 1.Կազմակերպել ծնողական ժողովներ |
| 2. Սպառիչ տեղեկություններ հավաքել դասարանի աշակերտների մասին | 2.Հետևել կարգապահությանը | 2. Կատարել այլ պլանավորված աշխատանքներ | |
| 3.Կազմել դասարանի դաստիարակչական աշխատանքի պլանը | 3.Հետևել սանիտարահիգիենիկ նորմերի պահպանմանը | 3. Իրականացնել դասարանի համար սահմանված գործավարությունը | |
| 4.Իրականացնել դասարանի համար սահմանված գործավարությունը | 4. Դպրոցի տնօրենությանը ներկայացնել սովորողների առաջադիմության, հաճախումների և վարքի մասին տեղեկատվություն | | |

***ԿՐԹԱ ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ***

| *Աշխատանքի ուղղվածությունը* | *Աշխատանքի հիմնական բովանդակությունը* | *Ժամկետներ* |
|---|---|---|
| **1.**Ուսումնա-դաստիարակչական նախատեսվող աշխատանքները ուստարվա ընթացքում | 1.Ուշադրություն դարձնել դասարանական կոլեկտիվի համախմբմանը:<br><br>2. Ապահովել անհատի ձևավորմանը նպաստող, յուրաքանչյուրի անհատականությունը ողջունող և ներուժը բացահայտող հոգեբանա- մանկավարժական միջավայր:<br><br>3. Ձևավորել բարյացակամ,ներդաշնակ փոխհարաբերություններ սովորողների,սովորողներիև մանկավարժների միջև:<br>4. Ձևավորել առողջ ապրելակերպի վարքագիծ:<br><br>5. Դաստիարակել հայրենասիրություն, հարգանք մեծերի հանդեպ:<br><br>6. Ի հայտ բերել աշակերտների նախասիրությունները և ընդգրկել նրանց հասարակական աշխատանքներում:<br><br>7.Օգնելաշակերտներին զարգացնելու սեփական կարողություններն ու հմտությունները,ինչը կնպաստի նրանց` հետագայում հասարակության մեջ արդյունավետ ինտեգրմանը: | Տարվա ընթացքում |
| Հայեցի դաստիարակություն | | |

| | | |
|---|---|---|
| **1.**Հոգևոր դաստիարակություն | Անհրաժեշտ է ձևավորել անձ, ով գիտակցի սեփական մշակույթի՝ լեզվի, պատմության, արվեստի,ավանդույթների , ազգային այլ արժեքների կարևորությունն ու նշանակությունը և լինի դրանց կրողը, գիտակցի,որ գիտությունը, կրթությունը մեծագույն արժեքներ են ժամանակակից աշխարհում: | Տարվա ընթացքում |
| **2.**Գեղագիտական դաստիարակություն | Աշակերտների մեջ ձևավորել գեղագիտական ճաշակ: Աշակերտը պետք է կարևորի գեղագիտական արժեքները, գնահատի գեղեցիկը, բարին և ճշմարիտը: Կազմակերպել էքսկուրսիաներ, որոնք կնպաստեն աշակերտների գեղագիտական դաստիարակությանը: | Տարվա ընթացքում |
| **3.**Հայրենասիրական դաստիարակություն | Ձևավորել քաղաքացի, ով հարգի Հայաստանի պետական խորհրդանիշը, լինի հայրենասեր,կարևորի ազգային հիմնախնդիրների լուծման գործում իր մասնակցության անհրաժեշտությունը: | Տարվա ընթացքում |
| **4.**Ֆիզիկական դաստիարակություն | Կազմակերպել աշակերտների առողջության ամրապնդմանն ու ֆիզիկական զարգացմանը նպաստող միջոցառումներ, մրցույթներ: Աշակերտը պետք է մշտապես հոգ տանի իր առողջության մասին, կարևորի մարմնակրթության դերը: | Տարվա ընթացքում |

| | | |
|---|---|---|
| **5**.Աշխատանքային դաստիարակություն | Ձևավորել անձ, ով դրսևորի աշխատասիրություն, հնարամտություն, նպատակադրվածություն, արժևորի ու գնահատի սեփական և այլոց աշխատանքը: | Տարվա ընթացքում |
| **6**.Բնապահպանական դաստիարակություն | Դաստիարակել սեր հայրենի բնության հանդեպ: Ձևավորել անձ, ով գիտակցի բնության պահպանման, շրջակա միջավայրի չաղտոտման կարևորությունը: | Տարվա ընթացքում |
| **7**.Դպրոց – ընտանիք կապը | Սերտ կապ պահպանել ծնողների հետ, նրանց մասնակից դարձնել դպրոցի աշխա տանքներին: Աշակերտը պետք է գիտակցի իր տեղն ու դերը ընտանիքում և հասարակության մեջ, դրսևորի արժանավայել պահվածք, գիտակցի ծնողների և համայնքի նկատմամբ հարգանքի դրսևորման կարևորությունը: | Տարվա ընթացքում |

***ՈՒՍՈՒՄՆԱ - ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ***

| **Ուսումն. շաբաթ**. | **Ուսումնա-դաստիարակչական աշխատանքների բովանդակությունը /առաջին կիսամյակ - 15 շաբաթ/** | **Կատարողներ** |
|---|---|---|
| 1. | Կահավորել դասարանը: Ստեղծել դասարանական անկյուն:Աշակերտի պահվածքը տանը և դպրոցում: Հարգանք մեծերի հանդեպ: | Դասղեկ, աշակերտներ |
| 2. | Զրույց՝ նվիրված ՀՀ անկախության տարեդարձին: | Դասղեկ, աշակերտներ |
| 3. | Աշակերտների կարգապահությունը: Զրույց՝ <<Իմ ուսուցիչը>> թեմայով: | Դասղեկ, աշակերտներ |

| | | |
|---|---|---|
| 4. | Ազնիվ ուանկեղծ հարաբերություններ դասարանում:Աշակերտ. կոլեկտիվի համախմբումը: | Դասղեկ, աշակերտներ |
| 5. | Զրույց՝ ‹‹Արցախյան հերոսամարտ ›› թեմայով: | Դասղեկ, աշակերտներ |
| 6. | Զրույց՝ <<Ինչպես եմ անցկացրել աշնանային արձակուրդներս>> թեմայով: | Դասղեկ, աշակերտներ |
| 7. | Քննարկումներ աշակերտների հետ՝ դասարանի առաջադիմությունը բարձրացնելու շուրջ: | Դասղեկ, աշակերտներ |
| 8. | Զրույց՝ <<Արդյո՞ք ամեն ինչ անում ես լավ սովորելու համար>>: | Դասղեկ, աշակերտներ |
| 9. | Սերմանել սեր հայրենիքի նկատմամբ: | Դասղեկ, աշակերտներ |
| 10. | Զրույց՝ <<Ի՞նչ անել երկրաշարժի ժամանակ>> թեմայով: | Դասղեկ, աշակերտներ |
| 11. | Ինչպե՞ս եմ անցկացնելու ձմեռային արձակուրդներս: | Դասղեկ, աշակերտներ |
| 12. | Ինչպե՞ս եմ անցկացնելու ձմեռային արձակուրդներս: | Դասղեկ, աշակերտներ |
| 13. | Առաջին կիսամյակի արդյունքների ամփոփում: | Դասղեկ, աշակերտներ |

Ուսումնա-դաստիարակչական աշխատանքներիբովանդակությունը /երկրորդ կիսամյակ - 19 շաբաթ/

| | | |
|---|---|---|
| 14. | Զրույց՝ << ՀՀ բանակի կազմավորումը>> թեմայով:Ֆիլմի դիտում ՝ << Հայոց բանակ>>: | Դասղեկ, աշակերտներ |
| 15. | Զրույց՝<<Աշակերտների իրավունքներն ու պարտականությունները>> թեմայով: | Դասղեկ, աշակերտներ |
| 16. | Աշխատանքը ազնվացնում է մարդուն: | Դասղեկ, աշակերտներ |
| 17. | Քննարկումներ աշակերտների հետ՝ դասարանի առաջադիմությունը բարձրացնելու շուրջ: | Դասղեկ, աշակերտներ |
| 18. | Աշակերտների հետաքրքրություններն ու նախասիրությունները:Ինչպեսեն սիրում անցկացնել իրենց ազատ ժամանակը: | Դասղեկ, աշակերտներ |
| 19. | Զրույց՝<<Կրթության անհրաժեշտության և յուրաքանչյուր առարկայի կարևորության մասին>> թեմայով: | Դասղեկ, աշակերտներ |
| 20. | Թումանյանական օրեր, գիրք նվիրելու արարողություն: Անցկացնել մրցույթ՝ << Լավագույն ասմունքող>>: | Դասղեկ, աշակերտներ |
| 21. | Իմ մայրիկը…/ կնոջ դերը ընտանիքում…/: | Դասղեկ, աշակերտներ |
| 22. | Ի՞նչ է ընկերությունը: Իմ ընկերները: | Դասղեկ, աշակերտներ |
| 23. | Զրույց՝ <<Համակարգչի և բջջային հեռախոսների դերը մեր կյանքում>> թեմայով: | Դասղեկ, աշակերտներ |

| | | |
|---|---|---|
| 24. | Երկրներ, որտեղ կցանկանայի լինել… | Դասղեկ, աշակերտներ |
| 25. | Իմ ընթերցած գրքերը… | Դասղեկ, աշակերտներ |
| 26. | Ինչպիսին եմ պատկերացնում ապագաս: | Դասղեկ, աշակերտներ |
| 27. | Մեր հայտնի մարզիկները: | Դասղեկ, աշակերտներ |
| 28. | Պատմական ակնարկ՝ նվիրված Մեծ Եղեռնի զոհերի հիշատակին: | Դասղեկ, աշակերտներ |
| 29. | Ակնարկ Ծիծեռնակաբերդի մասին | Դասղեկ, աշակերտներ |
| 30. | Հայաստանի 1ին հանրապետության հռչակումը | Դասղեկ, աշակերտներ |
| 31. | Հաղորդումներ, որ նախընտրում եմ նայել/ ինչու՞/: | Դասղեկ, աշակերտներ |
| 32. | Երեխաների իրավունքների պաշտպանության օր | Դասղեկ, աշակերտներ |
| 33. | Զրույց՝ <<Հաղթանակի և խաղաղության տոնը>> թեմայով:Մայիսյան հերոսամարտեր: | Դասղեկ, աշակերտներ |
| 34. | Ի՞նչ եմ սովորել այս ուսումնական տարում: | Դասղեկ, աշակերտներ |